

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԿ

1880–1921



Անվանի գրող, բանաստեղծ, թատերագիր, հրապարակախոս, թարգմանիչ և գրաքննադատ **Ալեքսանդր Բլոկը** 20-րդ դարի ռուս դասական գրականության ամենավառ ներկայացուցիչներից է, ռուս գրականության մեջ խորհրդապաշտական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

Բանաստեղծը ծնվել է 1880 թ. նոյեմբերի 16-ին Սանկտ Պետերբուրգում՝ ազնվական ծագում ունեցող մտավորականների ընթացքում: Աշխարհահռչակ գրողների ստեղծագործություններին Ալեքսանդրը ծանոթացել է մայրիկի միջոցով, որը կրթված ու զարգացած կին էր, և որի հետ որդու հոգևոր կապը շատ ամուր էր: Մայր և որդի միասին էին քննարկում մշակույթի և քաղաքականության նորությունները: Ալեքսանդրը հետագայում իր առաջին երկերը հենց մորն էր ներկայացնում, քանի որ բարձր էր գնահատում նրա կարծիքը:

1889-1898թթ. Ալեքսանդրը սովորում է գիմնազիայում, որից հետո կրթությունը շարունակում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, այնուհետև տեղափոխվում է պատմաբանասիրական ֆակուլտետ:

Իր առաջին ոտանավորը Բլոկը գրել է հինգ տարեկանում, իսկ տասը տարեկանում «Կառաբլ» ամսագրի երկու համարներն է ստեղծում: 1894-1897թթ. նա եղբայրների հետ ստեղծում և հրապարակում է «Վեստնիկ» ձեռագիր ամսագիրը, որի 37 համար է լույս ընծայում: Պատանի հասակում գրած բոլոր բանաստեղծությունները Բլոկը նվիրում էր մորը: Բանաստեղծը սիրում էր նաև դերասանական արվեստով զբաղվել՝ ձգտելով հայտնի դառնալ այդ բնագավառում, սակայն թատրոնի և բեմի արքաները նրան այդ հնարավորությունը չէին տալիս:

16 տարեկանում Բլոկը մոր հետ մեկնեց Գերմանիայի հանգստավայրերից մեկը: Այնտեղ նա գլուխը կորցնելու աստիճան սիրահարվեց մի կնոջ, որի նկատմամբ երկարատև ու խոր զգացմունքը նրա ոգեշնչման աղբյուրը դարձավ բազմաթիվ ստեղծագործություններ գրելիս:

1903 թ. Բլոկն ամուսնացավ հայտնի գիտնական Դ. Մենդելեևի աղջկա հետ, որին փոքրուց ճանաչում էր: Նրանց ամուսնությունից երեխաներ չծնվեցին, և Բլոկը ժառանգներ չունեցավ: 1904 թ. առաջին անգամ տպագրվեց Բլոկի՝ իր կնոջը նվիրված ստեղծագործությունների ժողովածուն՝ «Բանաստեղծություններ գեղեցիկ տիկնոջ մասին» վերնագրով:

1909 թ. Բլոկը կնոջ հետ մեկնեց Եվրոպա, որի արդյունքում ծնվեցին «Իտալական բանաստեղծություններ» շարքը և բանաստեղծությունների եռահատոր ժողովածուն: Իր այդ շրջանի գրական գործունեության համար Բլոկին ընդունեցին «Ակադեմիա» ընկերություն, որի անդամներն էին ռուս մեծանուն գրողներ Վ. Բրյուսովը, Վ. Իվանովը և այլք:

Բլոկն իր ստեղծագործություններում շոշափում էր սիրո, ընկերության, հայրենիքի, բնության թեմաներ, որոնցով ընթերցողին էր փոխանցում իր ապրումները, հոգու խռովքը, մտահոգություններն իր ժողովրդի և հայրենիքի ողբերգական վիճակի համար:

Բանաստեղծը մեծ խանդավառությամբ ընդունեց հոկտեմբերյան հեղափոխությունը, որին նվիրեց 1918 թ. գրած իր երկու պոեմները՝ «Սկյութները» և «Տասներկուսը»: Հեղափոխական ոգով տոգորված աշխատավորությունը շատ սիրեց այդ գործերը, սակայն նրանից երես թեքեցին հեղափոխությունը չընդունող ընկերներից շատերը, շատերը նրան նույնիսկ դավաճան համարեցին: Չնայած այս ամենին՝ 1919 թ. փետրվարին Բլոկին ձերբակալեցին և հետաքննեցին՝ կասկածելով հակահեղափոխական գործունեության մեջ, սակայն նա կարողացավ ապացուցել իր անմեղությունն ու նաև հավատարմությունը նոր գաղափարներին: Հեղափոխական շնչով գրված բանաստեղծությունները նրա տաղանդի վերջին փայլատակումները եղան: Դրանից հետո բանաստեղծը դադարեց գրելուց. նրան տանջում էին մարմնական ու հոգևոր հիվանդությունները, որոնք գնալով բարդանում էին: Բլոկը փորձեց բուժման նպատակով արտասահման մեկնել, սակայն իշխանությունը թույլ չտվեց դուրս գալ երկրից: Դա մեծ հարված էր առանց այն էլ ծանր վիճակում գտնվող բանաստեղծի համար: Դրանից հետո նա հրաժարվեց սննդից ու դեղորայքից, ոչնչացրեց իր բոլոր գրառումները: Իր վերջին բանաստեղծությունը Բլոկը գրեց մահից կես տարի առաջ՝ 1921թ. փետրվարին: Նույն

թվականի օգոստոսի 7-ին, գտնվելով ծայրահեղ չքավորության մեջ, Բլոկը մահացավ սրտի հիվանդությունից:

Բլոկի ստեղծագործությունները թարգմանվել են մի շարք լեզուներով: Նրա բանաստեղծություններն ու «Տասներկուսը» պոեմը թարգմանվել են նաև հայերեն:

ՁՅՈՒՆԵ ԱՂՋԻԿԸ

Նա եկավ հեռվից վայրի, նախնական,
Նա՛ մութի դուստրը ուրիշ մի դարի:
Հարազատները ընդառաջ չեկան,
Չցույց լույսը երկնականարի:

Բայց երբ գիշերվա մշուշի միջից
Տեսավ սֆինքսը՝ ափին Նևայի,
Շուրթերից պոկվեց թույլ, թեթև մի ճիչ,
Խառնվեց հողմի սուլոցին վայրի:

Ուսերը, կուրծքը, իրանը նազուն
Հողմը զուգում էր աստղերով իր ճոխ:
Իր Եգիպտոսն էր անվերջ երազում
Հյուսիսի դժգույն մշուշի միջով:

Եվ իմ քաղաքը՝ երկաթե ու գորշ,
Ուր մութ է, քամի, անձրև է ու ձյուն,
Նա անմեկնելի ինչ -որ հավատով
Ընդունեց որպես թագավորություն:

Եվ կամաց-կամաց դուր եկան նրան
Վիթխարիները մեր այն քարակերտ,
Պատուհանների լույսերն հուրհրան
Ձուլվեցին նրա անուրջների հետ:

Եվ նա ճանաչեց ծովս, ծփանք ու դող,
Կրակներ, տներ, մշուշն անսահման,
Անըմբռնելի իմ քաղաքը ողջ,
Անըմբռնելի՝ հենց իրեն նման:

Նա ինձ նվիրեց հողմի մատանին
Քանգի թիկնոցս աստղով է լեցուն,
Քանգի պողպատե գրահ է հագիս,
Եվ իմ գրահին խաչ է խստաշունչ:

Նայում է ուղիղ խորքը աչքերիս,
Գովում, որ վախկոտ, թույլ չէ թշնամին,
Նրա մթամած դաշտերից գալիս,
Իմ մեջ է խուժում ձյան ահեղ քամին:

Բայց համր է սիրտը Ձյունե Աղջկա,
Նա չի ընդունի այս սուրը, գիտե՛մ,
Որով կարող է գրահս ճեղքած,
Իմ կապանքները կտրել, նետել դեն:

Եվ ես՝ առաջնորդ թշնամի զորքի,
Փակված եմ հավետ իմ այս գրահում
Ու քեզ գրկելու անհաս ցնորքի
Սրբազան դողն եմ սրտիս մեջ պահում:

* * *

Դու լուսեղեն ես անմեղ ձյան նման
Ճերմակ ես՝ նման հեռու տաճարի:
Ես չեմ հավատում այս ձիգ գիշերվան,
Այս անմխիթար երեկոներին:

Իմ հոգուն տանջված ու մելամաղձոտ
Ես չեմ կամենում հավատալ նույնպես:
Գուցե թե, իբրև ուշացած ճամփորդ,
Բախեմ խաղաղված տանդ դուռը ես:

Մի պահ մոռացած տանջանքների ծով՝
Անհավատարմին ինքդ կներես,
Եվ դավաճանին, ձեռքդ մեկնելով՝
Հեռավոր գարուն դու կնվիրես: